ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀԿԱ-ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17/1-15/6 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան

19 դեկտեմբերի 2016թ
ժամը 10:00

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Պապոյանը, հանձնաժողովի անդամներ Ա.Սեմերջյանը, Ա.Սարգսյանը, Ն.Համբարձումյանը, Ա.Պողոսյանը և հանձնաժողովի քարտուղար Հ.Ղարիբյանը:

Օրակարգ
հայտերի բացման և ուսումնասիրման մասին

ՀՀԿԱ-ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17/1-15/6 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լ.Հարությունյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ են ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցը՝

Մասնակցի անվանումը և հասցեն		
Հ/Հ	«Այյունեթվորքս» ՍՊԸ ք. Երևան, Տերյան 19-4	
1	Գնային առաջարկը առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/	Գնային առաջարկը ներառյալ ԱԱՀ /ՀՀ դրամ/
	63 175 000	**75 810 000**

«Այյունեթվորքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան: Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

- «Այյունեթվորքս» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Գնահատող հանձնաժողովը որոշեց նաև 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցին առաջարկել 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող ՀՀԿԱ-ՊԵԿ-ՇՀԾՁԲ-17/1-15/6 ծածկագրով գնման հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված թղթերը, միաժամանակ որոշեց ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում ուղարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա

դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչական շենքում, ք. Երևան, Մ. Խորենացու-3,7 հասցեում:

նախագահ	_____	Ա.Պապոյան
անդամներ	_____	Ա.Սեմերջյան
	_____	Ա.Սարգսյան
	_____	Ն.Համբարձումյան
	_____	Ա.Պողոսյան
քարտուղար	_____	Հ. Ղարիբյան